ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

2 նոյեմբերի 2023 թվականի N 1885 - Ա

ԳՈՒՅՔ ՆՎԻՐԱԲԵՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի 605-րդ հոդվածը, «Պետական գույքի կառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 22-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետը, 25-րդ հոդվածի 2-րդ մասը և Հայաստանի Հանրապետության կառավարության 2016 թվականի հոկտեմբերի 13-ի N 1067-Ն որոշմամբ հաստատված կարգի 1-ին կետը՝ Հայաստանի Հանրապետության կառավարությունը ո ր ո շ ու մ է.

1. Հայաստանի Հանրապետության պաշտպանության նախարարության հաշվեկշռում հաշվառված շարժական գույքը՝ ավտոմոբիլային տեխնիկան (այսուհետ՝ գույք) համաձայն հավելվածի նվիրաբերել Հայաստանի Հանրապետության Արագածոտնի մարզի, Արարատի մարզի, Արմավիրի մարզի, Գեղարքունքի մարզի, Լոռու մարզի, Կոտայքի մարզի, Սյունիքի մարզի և Տավուշի մարզի համապատասխան համայնքներին՝ ավտոմոբիլային տեխնիկայի աշխատունակությունը համայնքների միջոցով վերականգնելու և այն հետագայում զորահավաքային միջոցառումներին ծառայեցնելու պայմանով:

2. Հայաստանի Հանրապետության պաշտպանության նախարարին՝ սույն որոշումն ուժի մեջ մտնելուց հետո եռամսյա ժամկետում սույն որոշման հավելվածի ցանկում նշված համայնքների ղեկավարների հետ կնքել նվիրաբերության պայմանագրեր՝ դրանցում նախատեսելով դրույթ, որ պայմանագրերի կնքման և գույքի հանձնման-ընդունման և դրանց տեղափոխման հետ կապված ծախսերը ենթակա են իրականացման համայնքների միջոցների հաշվին:

3. Հայաստանի Հանրապետության պաշտպանության նախարարին՝ սույն որոշման 2-րդ կետում նշված պայմանագրերը կնքելուց հետո եռամսյա ժամկետում համապատասխան համայնքների հետ համատեղ ապահովել գույքի հանձնման-ընդունման աշխատանքների կատարումը:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎԱՐՉԱՊԵՏ Ն. ՓԱՇԻՆՅԱՆ

Երևան

02.11.2023
ՀԱՎԱՍՏՎԱԾ Է
ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ
ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅԱՄԲ